

- 54 Մըտեալ ուրեմն իբր ի կրկէս
Յասացեալ տօնս մեծահասնդէս
Չինուք Հայոց զՉայս քաջապէս
Պարտէր ճարտար ոճիւ պէսպէս :
- 55 Չի բընաբանն որ նա դընէր ,
Վըկայաթիւնն որ բանն հաստէր ,
Եւ զօրինակն որ անդ ածէր ,
Չողջն ի մերոց սուրբ հարց բերէր ,
- 56 Անդ էր դիտել զուրախութիւն
Ու զղասիրաց անձանց արթուն ,
Եւ զապշութիւնն երկմտելոյն
Ընդ թախծութեան յամառելոյն :
- 57 Հընար չէր անդ գաղիլ յաչաց
Նըրբահայեաց նըկատողաց
Յամման սըրտից այնց բաբունեաց
Որք պահէին զազգ^{օն} բորբամած :
- 58 Այտուիկ Սարգիս ոչ նախատիր .
Այլ եւս յաւէտ գովասանիր ,
Ուստի Յակոբ նեղեալ ճընշիր ,
Չի ի դերեւս ել հընար իւր :
- 59 Որպէս եւ է Հայոց կաճառ ,
Չատ յայնց որք միշտ էին յամառ ,
Չոչինչ գըտեալ ատման պատճառ .
Յարգէր ըզնա սիրով յոյժ վառ :
- 60 Եւ երբ նա էր քարոզատուն
Յեկեղեցի ինչ մեծ Պօլսոյն ,
Երամ երամ Հայք նոյն տեղոյն
Գնային լսել անդ զճանն նորուն :